«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) մասին

Ո՞վ ենք մենք

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) կազմակերպություն է, որը գյուղերի երեխաներին, երիտասարդներին ու նրանց ընտանիքներին հնարավորություն է տալիս բացահայտելու և իրագործելու սեփական կարողությունների առավելագույնը:

Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումն սկսվել է 2004թ. Արմավիրի մարզի Քարակերտ գյուղից:

Մեր առաքելությունը և տեսլականը

Մեր առաքելությունն է ՔՈԱՖ ՍՄԱՐԹ նախաձեռնությունների շնորհիվ անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրել գյուղերի երեխաներին ու մեծահասակներին՝ նորարարության միջոցով զարգացնելու իրենց համայնքները:

Մենք վստահ ենք, որ Հայաստանի բոլոր մանուկները կիրառելու են իրենց ամբողջ ներուժն ու մասնակցելու են իրենց միջավայրի զարգացման գործին:

Ո՞ւմ ենք զորակցում

Մեր նպատակն է բարձրացնել գյուղաբնակների կյանքի որակը և ամրացնել գոյություն ունեցող հաստատությունները՝ կիրառելով զարգացման համայնքահենք ծրագրեր: Ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

Մեր ծրագրերը

ՔՈԱՖ-ը զարգացման ծրագրեր է իրագործում թիրախային հետևյալ ոլորտներում՝ կրթություն, առողջապահություն, երեխայի և ընտանիքի ծառայություններ, տնտեսական զարգացում և ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ծրագրեր: Սրանցից յուրաքանչյուրն ուղեկցվում է ենթակառուցվածքների բարեկարգման նախագծերի իրականացմամբ:

ՔՈԱՖ-ը չի տրամադրում անհատական կամ ընտանեկան ֆինանսական որևէ աջակցություն:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

CHILDREN
OF ARMENIA
FUND

Մեր հիմնադիրը

Դոկտոր Կարո Արմենը Ստամբուլում ծնված ամերիկահայ գործարար է, որ հիմնել է «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը: Դոկտոր Արմենը «Աջենուս» ընկերության հոգաբարձուների խորհրդի նախագահն ու գործադիր տնօրենն է: «Աջենուսը» կենսատեխնոլոգիական ընկերություն է, որը գերժամանակակից տեխնոլոգիաների և թերապիայի նորարարական համադրություններով է պայքարում քաղցկեղի դեմ:

Միջազգային բարեգործական վարկանիշը

ՔՈԱՖ-ը բարձրագույն գնահատական է ստացել՝ **Guide Star**, **Better Business Bureau** և **Charity Navigator** կազմակերպությունների պահանջներին համապատասխան:

Համաձայն **Charity Navigator**-ի՝ ՔՈԱՖ-ն արժանացել է բարձրագույն 4 աստղին: Նման ընկերությունը համարվում է իր ոլորտի առաջատար և գերազանցում է նույն դաշտում գործող այլ ընկերությունների: Charity Navigator-ը գնահատում է կազմակերպությունները երկու տեսանկյունից՝ ֆինանսական ողջամտություն և վստահելիություն ու թափանցիկություն:

Better Business Bureau (BBB) Wise Giving Alliance-ը մշակվել է՝ օգնելու դոնորներին մեծ նվիրատվություններ կատարելու և ավելացնելու հանրային վստահությունը բարեգործական կազմակերպությունների նկատմամբ: Այն կազմակերպությունները, որոնք համապատասխանում են վստահության այս ստանդարտներին, դրանք հաստատող փաստաթղթեր են ներկայացնում՝ ինչպե՞ս են կառավարում ընկերությունը, ինչպե՞ս են ծախսում գումարները, որքանո՞վ են հավաստի իրենց ներկայացուցչությունները, որքանո՞վ են պատրաստ հանրայնացնելու իրենց մասին տեղեկատվությունը: ՔՈԱՖ-ն այդ կազմակերպություններից է:

Guide Star-ը ոչ առևտրային ընկերությունների և հիմնադրամների մասին տեղեկատվության առաջատար աղբյուրներից է: Մասնագետների համար առաջարկվող ծառայություններից զատ, այն նպատակ ունի ապահովելու անհատներին համապատասխան վստահությամբ, որ իրենց նվիրատվություններն օրինապաշտ կազմակերպության են ծառայում: ՔՈԱՖ-ը նշված է այս կայքում որպես վստահելի կազմակերպություն:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

CHILDREN OF ARMENIA FUND

Բարեգործական կազմակերպությունների վարկանիշներն ու գնահատականները դոնորները կարող են տեսնել՝ ինչպես են տնօրինվում իրենց գումարներն ու ինչ ազդեցություն են թողնում:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076